



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	<u>Էկոլոգիական դաստիարակություն դպրոցում</u>
ԱՌԱՐԿԱ	<u>Կենսաբանություն</u>
ՀԵՂԻՆԱԿ	<u>Ռուզաննա Սարգսյան</u>
ՄԱՐԶ	<u>Արագածոտն</u>
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<u>Ճարճակիսի մ/դ</u>

Բովանդակություն

1. Ներածություն	3
2. Թեմա.....	4-17
3. Եզրակացություն.....	18
4. Օգտագործված գրականության ցանկ.....	19

Ներածություն

Ներկա ժամանակաշրջանում մարդկանց առջև ծառայած ամենաբարդ և ամենակարևոր հիմնախնդիրը բնության և հասարակության դինամիկ հավասարակշռված պահպանությունն է: Կա՛մ մարդը կկարողանա պահպանել այդ դինամիկ հավասարակշռությունը, կա՛մ նրա մեղքով կվերանան բնական համալիրները (անտառներ, լճեր, տափաստաններ, մարգագետիններ և այլն), և կվերանա նաև մարդը:

Բնությունը երբեք չի ենթարկվել այնպիսի անողոք հարձակման, ինչպես վերջին շրջանում: Բնական համալիրների քայքայումը հանգեցրել է բուսական, կենդանական, սնկերի, մանրէների տեսակների ոչնչացմանը, որը աղետալի չափերի է հասել նաև Հայաստանում:

Մարդն անխնա օգտագործում է միլիոնավոր տարիների էվոլյուցիայի ընթացքում ստեղծված չվերականգնվող բնական հարստությունները, փոխում է Երկրի լանդշտաֆտը, նրա կենսաբազմազանությունը, ջրային հարստությունը, մթնոլորտի բաղադրությունը, հողը ենթարկում է քայքայման, առանց կանխատեսելու այն աղետալի հետևանքները, որոնք սպառնում են ներկա քաղաքակրթությանը: Ժամանակին Ֆ. Էնգելսը նախագգուշացրել է. «Չպետք է շատ գայթակղել բնության նկատմամբ տարած հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի հաղթանակի համար նա մեզանից վրեժխնդիր է լինում»:



1.«Էկոլոգիան որպես կենսաբանական և սոցիալական գիտություն, կապը մյուս գիտությունների հետ»

Էկոլոգիան գիտություն է ապրելակերպի մասին:

Էկոլոգիա բառը թարգմանաբար նշանակում է «օյկոս» - ապրելատեղ, կացարան և «լոգոս» - գիտություն:

«Էկոլոգիա» գիտության մասին տրվել են տասնյակ սահմանումներ:

«Էկոլոգիան գիտություն է օրգանիզմների կենսագործունեության

օջինաչափությունների մասին (բոլոր դրսևորումներով, ինտեգրման բոլոր

մակարդակներում) իրենց բնական ապրելատեղերում, հաշվի առնելով նաև մարդու

կենսագործունեությամբ պայմանավորված փոփոխությունները», - ասել է անվանի

Էկոլոգ Վ. Ռադկևիչը:

Ներկայումս Էկոլոգիան որպես գիտություն բնութագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի ընդհանուր դրույթներ.

1. Էկոլոգիան գիտություն է օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունների մասին:

2. Էկոլոգիան համակարգերն ուսումնասիրող գիտություն է (տեղախումբ, էկոհամակարգ, կենսոլորտ):

3. Էկոլոգիան գիտություն է բնության և հասարակության փոխհարաբերությունների և հիմնախդիրների մասին:

4. Էկոլոգիան նաև գիտություն է բնության կազմության և գործառույթների մասին:

Այստեղից հետևություն, որ Էկոլոգիան ամենից առաջ գիտություն է կենդանի օրգանիզմների միմյանց և շրջակա միջավայրի գործոնների փոխհարաբերությունների մասին:

Էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունները կյանքի վերօրգանիզմային համակարգերի (տեղախումբ, էկոհամակարգ, կենսոլորտ) կառուցվածքն ու գործառույթները, ինչպես նաև բնության և հասարակության դինամիկ հավասարակշռությունը պահպանելու հիմնախնդիրները: Ժամանակակից Էկոլոգիան իրենից ներկայացնում է գիտությունների ճյուղավորված համակարգ: Այն բաժանվում է

1. քննիչները Էկոլոգիայի, որն ուսումնասիրում է բնական համալիրները, բուսական, կենդանական, սնկային խմբերը և նրանց շրջապատող ոչ կենսական գործոնների (լույս, ջերմություն, խոնավություն) փոխադարձ կապերի մեխանիզմները:

2. Էկոլոգիայի մասնավոր բաժիններն ուսումնասիրում են առանձին տեսակների, տեղափոխումների և առանձին օրգանիզմների հասարակական երևույթների էկոլոգիական առանձնահատկությունները: Մասնավոր էկոլոգիան ունեցել և այժմ էլ ունի կիրառական նշանակություն, հատկապես վնասատուների դեմ պայքարի կենսաբանական մեթոդները կիրառելիս:

Էկոլոգիայի զարգացմանը զուգընթաց ձևավորվել են նորանոր գիտություններ՝

* Ֆիզիոլոգիական էկոլոգիան ուսումնասիրում է միջավայրի պայմաններին կենդանի օրգանիզմների հարմարվածության ֆիզիոլոգիական մեխանիզմները:

* Տեղախմբերի էկոլոգիան ուսումնասիրում է բուսական, կենդանական և սնկային խմբավորումների էկոլոգիական հարմարվածության մեխանիզմները:

* Էվոլյուցիային էկոլոգիան ուսումնասիրում է բնական խմբավորումներում ընթացող էվոլյուցիայի իրադարձությունները:

* Ձևաբանական էկոլոգիան ուսումնասիրում է միջավայրի համալիր պայմաններից կախված՝ բնական խմբավորումների կառուցվածքային առանձնահատկությունները:

Էկոլոգիական գիտություն է նաև ջրակենդանաբանությունը, որն ուսումնասիրում է ջրային էկոհամակարգների և դրանցում բնակվող առանձին խմբավորումների էկոլոգիական առանձնահատկությունները:

Արագ կերպով զարգանում է նաև մարդու էկոլոգիա գիտությունը, որն ուսումնասիրում է նախ վերափոխված, աղտոտված բնության ազդեցությունը մարդու վրա, ապա նաև բնության վրա մարդու հետագա ներգործության հետևանքները և սոցիալական մի շարք հիմնախնդիրներ:

Վերջին տարիներին սկսել է արագ զարգանալ քիմիական էկոլոգիա գիտությունը, որն ուսումնասիրում է տեղախմբերի կողմից շրջակա միջավայր արտազատվող բարձրակտիվ նյութերի դերը բնական խմբավորումների միասնության ապահովող գործընթացներում:

Էկոլոգիական ուսումնասիրությունների հատուկ բնագավառ է մաթեմատիկական էկոլոգիան, որի խնդիրն է էկոլոգիայի մասին թվային արժեքները մաթեմատիկական մոդելավորման ենթարկելը, որը հնարավորություն կնձեռնի կանխագուշակումներ կատարել տեղախմբերի թվաքանակի դինամիկայի, էկոհամակարգների

կենսագործունեության օրինակարգությունների մասին:

Էկոլոգիան՝ որպես կենսաբանական տեսական հզոր գիտություն, տարածել է իր թները մարդկային գործունեության մի բնագավառ, որտեղ կարելի լինի անտեսել էկոլոգիական մոտեցումը:

Բնական գիտություններից էկոլոգիային ավելի մոտ է կանգնած կենդանաբանությունը, բուսաբանությունը, հողագիտությունը, լանդշտաֆտագիտությունը: Հատկապես այդ գիտությունների մասնագետներն են առաջինը տազնապել տեսակների էկոհամակարգների, երկրի հողաշերտի, անտառների անդարձելի կորուստների մասին:



2. Էկոլոգիայի կապը բնապահպանության հետ

Ըստ ժամանակակից ռուս էկոլոգ, ակադեմիկոս Վ. Բոլշակովի կիրառական էկոլոգիայի մեջ են մտնում էկոլոգիական ախտորոշումը, էկոլոգիական թունաբանությունը, էկոլոգիական փորձաքննությունները, էկոլոգիական մշտադիտարկումը (մոնիտորինգ), էկոլոգիական կանխագուշակումը, էկոլոգիական ճարտարագիտությունը և այլն (1993):

Էկոլոգիան ամենաշատը կապված է բնապահպանության հետ:

Բնության վրա մարդու ներգործությունը սկսվել է մարդու ձևավորման ժամանակաշրջանից, սակայն մարդու զարգացման վաղ շրջանում այդ ներգործությունը եղել է համեմատաբար աննկատ: Այդ ժամանակաշրջանում հիմնականում ոչնչացրել են բոլոր կենդանիներին և բնակավայրերի շրջապատում գտնվող բուսական զանգվածները, սակայն մարդու հետագա գործունեությունը բնության հետ եղել է չգիտակցված, որի հետևանքով ոչնչացվել և անապատացել են հսկայական անտառզանգվածներ, արոտավայրեր Միջերկրական ծովի ավազանում, Աֆրիկայում, Միջին Ասիայում, Մերձավոր Արևելքում և այլն:

* Բնապահպանությունը գիտություն է, որը էկոլոգիայի տեսական նախադրյալների հիման վրա գործնական միջոցառումներ է մշակում բնական հարաբերությունների պահպանության և արդյունավետ օգտագործման, բնական էկոհամակարգների բարելավման, բնության և հասարակության հավասարակշռվածությունը պահպանության մասին:

Եթե բնապահպանությունը ինքնուրույն գիտություն է, ապա նա պետք է ունենա իր յուրահատուկ ուսումնասիրման առարկան, նպատակները և մեթոդները:

Ըստ ժամանակակից խոշոր էկոլոգ Ա. Յաբլոկովը բնապահպանությունը՝ որպես գիտություն ուսումնասիրման առարկան է կենդանի բնության կապը շրջակա միջավայրի և մարդու հետ՝ իր բոլոր դրսևորումներով:

«Բնապահպանությունը» գիտության նպատակն է կենդանի և անկենդան բնության որակական և քանակական օրինաչափությունների պահպանությունը որպես մեր մոլորակի և կենսոլորտի կարևոր բաղադրամաս: «Բնապահպանությունը» գիտության մեթոդներն են ոչ միայն տարբեր գիտությունների (էկոլոգիա, գենետիկա,

կենսաշխարհագրություն, ֆիզոլոգիա, քիմիա և այլն) մեթոդների կիրառումը, այլ նաև իրեն հատուկ բնապահպանական ուսումնասիրությունների մեթոդները՝ գենոֆոնդի պահպանության յուրահատուկ մեթոդների կիրառումը, հատուկ պահպանվող տարածքների չափերի և ձևերի որոշումը, վերացման ենթակա բուսական, կենդանական, սնկերի, մանրէների տեսակների և տեղափոխումների կառավարումը բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման եղանակների մշակումն ու կիրառումը, բնության հետ մարդկանց փոխհարաբերությունների իրավական կարգավորումը և այլն:



3. Ժամանակակից էկոլոգիական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունները

Ժամանակակից կյանքը թելադրում է մարդու և բնության փոխհարաբերությունների նոր մակարդակ: Էկոլոգիական գիտելիքները խիստ անհրաժեշտ են , երբ մեծ չափերով օգտագործում են տարբեր բնույթի թունաքիմիկատներ, որոնց չհիմնավորված օգտագործումը կարող է պատճառ դառնալ էկոհամակարգների աղտոտմանը:

Շատ էկոլոգիական հիմնախնդիրների լուծումն ընկած է ժամանակակից էկոլոգիայի հիմքում:

Այդ հիմնախնդիրներն են՝

1. Գիտական համալիրային հիմունքներ մշակել բնության և հասարակության դինամիկ հավասարակշռված անսահմանափակ ժամանակաշրջանում ապահովելու համար:

Կամ մարդը կկարողանա ապահովել այդ դինամիկ հավասարակշռված, կամ նրա մեղքով կքայքայվեն բնական համալիրները:

2. Գիտական հիմունքներ մշակել բնական հարստությունները, օգտակար հանածոները, դեղաբույսերը, հողերը, քաղցրահամ ջրերի պաշարները արոտավայրերը, որսորդարդյունագործական կենդանիները, ձկնային հարստությունները և այլն, արդյունավետ օգտագործելու համար:

3. Գիտական հիմունքներ մշակել գյուղատնտեսական մշակաբույսների և անտառների վնասատուների դեմ պայքարի քիմիական և այլ եղանակներից կենսաբանականին անցնելու համար: Այստեղ «Էկոլոգիան» ելնում է այն հանրահայտ դրուժից, որ բնության «ներքին գործերին» միջամտելու յուրաքանչյուր կոպիտ, գիտնականորեն չհիմնավորված միջամտությունը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների:

4. Ժամանակակից էկոլոգիան և բնապահպանությունը կոչված են ոչ միայն պահպանելու բնական համալիրները, բուսական , կենդանական և սնկային տեսակները, որոնց մի զգալի մասը վերացել կամ վերացման վտանգի տակ է, այլև բարձրացնել բնական և արհեստական (ագրոհամակարգեր) համալիրների արդյունավետությունը:

5. Ժամանակակից էկոլոգիայի խնդիրն է մշակել էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա, ամենուրեք արդյունաբերության մեջ ներդնել կենսաբանական մաքրման եղանակները:

4. Գաղափար էկոլոգիական գործոնների մասին

Էկոլոգիական գործոն է կոչվում կենդանի օրգանիզմների վրա ուղղակի կամ անուղղակի ձևով ազդող բնական միջավայրի ցանկացած տարր:

Էկոլոգիական գերծոնների ողջ բազմազանությունը բաժանվում է 2 մեծ խմբի: Մի խումբը իր մեջ ներառում է անկենդան բնության բաղադրիչներ և և կոչվում է նչ կենսական (աբիոտիկ) գործոններ: Բազմաթիվ ոչ կենսական գործոններից կարևոր դերը պատկանում է կլիմայականին, հողայինին, ռելիեֆին, ջրայինին և քիմիականին: Կլիմայականի մեջ մտնում են արեգակնային ճառագայթումը, լույսը և լուսային ռեժիմը, ջերմությունը, խոնավությունը, մթնոլորտային տեղումները (քամիներ, մթնոլորտային ճնշումներ և այլն):

Հողայինի մեջ մտնում են հողի մեխանիկական կառուցվածքը և քիմիական կազմը, գազային բաղադրությունը, թթվայնությունը, խոնավությունը և այլն:

Ռելիեֆի մեջ մտնում են տեղանքի դիրքադրություն, բարձրությունը ծովի մակարդակից և այլն:

Ջրայինի մեջ մտնում են ջրի թափանցիկությունը, հոսունությունը, ջերմությունը, թթվայնությունը, գազային բաղադրությունները , օրգանական և հանքային նյութերի պարունակությունը:

Քիմիականի մեջ մտնում են մթնոլորտի, հողի և ջրի քիմիական կազմությունը:

Մի խումբ օրգանիզմների ազդեցությունը մյուս օրգանիզմների կեսագործունեության վրա, ինչպես անկենդան միջավայրի վրա ստացել է կենսական գործոններ (բիոտիկ) անունը: Հիմնական կենսական գործոններից կարելի է նշել բուսական, կենդանական, սնկայինը և միկրօրգանիզմայինը: Այդ կենսական գործոններից կարելի է նշել նաև մարդու ուղղակի կամ միջնորդավորված ներգործությունը կենդանի և անկենդան բնության վրա, որն ստացել է մարդկային գործոն (անթրոպոգեն) անունը:



5. Միջավայրի ոչ կենսական գործոններ

Եթե ջերմությունը պարտադիր պայման է բոլոր օրգանիզմների համար, ապա լույսը որոշ ապրելակերպ ունեցող կենդանիների համար պարտադիր պայման չէ: Լրիվ մթության պայմաններում կարող են ապրել խորջրյա, ստորգետնյա և անձավային կենդանիները: Ընդհանրապես մեծ է լույսի դերը կենդանական աշխարհի գոյատևման համար: Լույսը արտաքին հզոր գործոն է, որն ազդարարում է բուսական և կենդանական օրգանիզմներում ընթացող կենսական գործընթացների սկիզբը, ընթացքը ևավարտը:

Կենդանիները բազմանում են, ճմեռելու են գնում գրեթե միշտ ժամանակին: Այս բոլոր կենսական գործընթացները մեծ չափով կախված են լույսից:

Ցերեկային ապրելակերպ վարող կենդանիները գիշերները մտնում են իրենց թաքստոցները, իսկ գիշերային ապրելակերպ ունեցողները ցերեկները:

Կենդանիների մեծ մասը լավ տարբերում է լույսի սպեկտրի բաղադրությունը, այսինքն օժտված է գունային տեսողությամբ: Գունային տեսողությունը լավ զարգացած է թռչունների և որոշ կաթնասունների, միջատների և որոշ այլ խմբերի մոտ: Օրինակ. Կատուն տարբերում է 6 գույն:

Մթության պայմաններում ապրելու պատճառով, երկարատև էվոլյուցիայի ընթացքում, տեսողությունը կորցրել է կենդանիներին առավելություն տալու իր նշանակությունը և շատ կենդանիների մոտ այն հետ է զարգացել (խզուրդ):

Հակառակ դրան՝ մթության մեջ ապրող որոշ կենդանիների մոտ (խորջրյաձկներ) տեսողության օրգանը գերաճել է:

Բացի Երկրից և Արեգակից կա ևս մեկ տիզերական լուսատու մարմին, որը մեծ ազդեցություն ունի Երկրի կյանքի վրա, դա Լուսինն է:

Լուսնի և Արեգակի համատեղ ձգողական ուժից, որը շատ դեպքերում պայմանավորվում է մակընթացությունը: Լուսնի պտույտը Երկրի շուրջը հանգեցնում է նրան, որ գոյություն ունեն ոչ միայն մակընթացության օրական, այլև ամսական պարբերականություն: Մակընթացության առավելագույն բարձրությունը նկատվում է 14 օրը 1 անգամ, երբ Արեգակն ու Լուսինը գտնվում են Երկրի հետ մեկ ուղիղ գծի վրա, և առավելագույն ազդեցություն են ունենում օվկիանոսի ջրերի վրա:

* Բոլոր տեսակների համար ջերմությունը պարտադիր էկոլոգիական գործոն է: Մակայն ջերմության նկատմամբ բուսական, կենդանական և սնկային տեսակների ռեակցիան խիստ յուրահատուկ է:

Ըստ ջերմության նկատմամբ ունեցած վերաբերմունքի կենդանիները բաժանվում են երկու խմբի սառնարյուն կամ էկզոթերմ տաքարյուն կամ էնդոթերմ:

Էկզոթերմ (էկզո – արտաքին և թերմ - ջերմություն) կոչվում են այն կենդանիները, որոնք չունեն հատուկ ջերմակարգավորման օրգան և նրանց մարմնի ջերմաստիճանը կախված է արտաքին միջավայրի ջերմաստիճանից:

Տաքարյուն (էնդոթերմ, ներքին ջերմություն) կոչվում են այն կենդանիները, որոնք ունեն հատուկ ջերմակարգավորման օրգան և նրանց մարմնի ջերմաստիճանը քիչ է կախված շրջապատի ջերմաստիճանից:

Սառանարյունությունը էկոլոգիական տեսակետից մեծ առավելություն է, քանի որ նրանք մարմնի ջերմաստիճանի պահպանման համար վատորեն են երգիա չեն հսկում:

Երկրի ցամաքի վրա խիստ անհարմար է բաշխված նաև խոնավությունը, որը համարվում է կենդանական և բուսական տեսակների աշխարհագրական տարածման հզոր սահմանափակող գործոն: Խոնավության պակասի հետ կապված հարմարանքների առաջացումը հատկապես հատուկ և չորային պայմաններում ապրող կենդանիների և բույսերի համար: Անապատային կենդանիների մաշկը այնպես է հարմարված, որ կենդանին մաշկի միջոցով ջրի գոլորշիացումը հասցնի նվազագույնի, այլապես շատ կարճ ժամանակամիջոցում նա կջրազրկվի և կմահանա:

Հրդեհ

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում էկոհամակարգների վրա հրդեհների ազդեցությունը հարցերի ուսումնասիրությունը ցույց են տվել, որ պատկերացումները հրդեհների մասին որպես էկոլոգիական գործոնների, պահանջում են վճռական վերանայում:

Հրդեհները կարող է դառնալ շատ կարևոր լիմիտավորվող գործոն: Ըստ երկրներում որսորդները նկատել են, որ անտառի առաջին կարգի խոտածածկն այրելուց հետո թռչորսը շատանում է: Պարզվել է, որ խոտածածկնայրելուց հետո հատկապես ընդավորները բուռն աճ և շատ բերք են տալիս , որը

թռչունների համար դառնում է կերի առատ աղբյուր: Հաճախ հրդեհի պատճառ է դառնում կայծակի հարվածությունը: Բնական ծագում ունեցող հրդեհները շատ ինտենսիվ են ընթանում և հաճախ այրում են ամբողջ բուսականությունը, կենդանական տեսակների մի մասը և հողի օրգանական ծագում ունեցող զանգվածները, մինչդեռ ժամանակին կիրառվող հրդեհները շատ օրգանիզմների համար սահմափակվող գործոնի դեր են կատարում , և կենսահամակարգը ամեն ինչ սկսում է նորից:

Այսպիսով, երկարաժամկետ օգտագործման արդյունքները վկայել են, որ այն իսելամիտ ձևով օգտագործելով կարելի է բարձրացնել էկոհամակարգի արդյունավետությունը: ԱՄՆ-ի Ջորջիա նահանգում կես միլիոն հեկտար անտառ կառավարում է «պլանային» հրդեհների միջոցով:



5. Միջավայրի կենսական գործոններ

Որոշակի պայմաններում (կենսահամակարգներում) ապրող բոլոր կենդանական տեղախմբերի երկարատև էվոլյուցիայի ընթացքում բազմաթիվ թներով կապվեն են միմյանց հետ: Կենսական կապերի ձևերը բազմազան են: Դրանք են՝ գիշատչություն, մակաբուծություն, համակեցություն (սիմբիոզ) մրցակցություն և այլն:

Գիշատչություն : Ներկայումս էլ շատ շարքային մտածողների մոտ շարունակվում է իշխել այն գաղափարը, որը գիշատիչ կենդանիները վնասակար են: Հավանաբար այդպես են մտածել նաև անցյալ դարաշրջանի 30-40_ական թվականների կենդանաբանները, որոնք պատերազմ հայտարարել գիշատիչների դեմ: Նրանց մտածելակերպը եղել է շատ պարզ և վտանգավոր : Նրանք գտնում էին, որ վերացնելով գիշատիչ կենդանիներին, որոնք սնվում են բուսակեր և որսի նշանակությունը ունեցող կենդանիների (եղջերուների, նապաստակների, կաքավների, մայրահավերի, իլահավեր և այլն), ապա որոշ ժամանակ անց որսի կենդանիների թիվը կտրուկ կավելանա, և որսարդյունագործունեությունը կգարգանա:

Այնուամենայնիվ բնության վրա մարդու ներգործության ընթացքում կենդանական աշխարհում ամենաշատը տուժել են գիշատիչ կաթնասունները և թռչունները:

7. Մարդկային գործոն

Երկիրն ունի թաղանթ, և այդ թաղանթն ունի հիվանդություններ: Այդ հիվանդություններից մեկը կոչվում է մարդ:

Ֆ. Նիցշե

Կենսական գործոնների խմբին են պատկանում նաև մարդածին (անթրոպոգեն) գործոնները: Դա մարդու կողմից ստեղծված միջավայր է: Նրանում ընդգրկվում են սոցիալական միջավայրը և «երրորդ բնություն» միջավայրը:

Սոցիալական միջավայրը` մարդու գոյատևման և գործունեության համար շրջապատող հասարակական, նյութական և հոգևոր պայմաններ են: Այն իր հերթին բաժանվում է մակրոմիջավայրի (արտադրողական ուժեր, հասարակական հարաբերություններ, հասարակական գիտակցություն, մշակույթ) և միկրոմիջավայրի (մարդու անմիջական շրջադարձության ընտանիք, աշխատանքային կոլեկտիվ, ուսումնական խումբ): «Երրորդ բնության» միջավայրը բնակեցված միջավայրն է մարդկանց արհեստական շրջապատն է (օրինակ` շենքերը, ասֆալտապատ ճանապարհները, արհեստական լուսավորումը և այլն): Մարդը կամա թե ակամա հարմարվում է իր իսկ ստեղծած միջավայրի պայմաններին: Մարդն ունի հարմարվողական բարձր հատկություն, թեև այդ հարմարվածությունները կատարվում են մարդու առողջության հաշվին: Երկրի վրա իրավիճակը փոխվել է այն ժամանակ, երբ մարդը տիրապետել է էներգիայի տարբեր ձևերին` միջուկային, էլեկտրական, ջերմային: Մարդը դարձել է բնությունը վերափոխող հզոր ուժ: Ոչ միշտ է, որ մարդը ճիշտ է օգտագործել իր հնարավորությունները: Շատ տեղերում մարդու միջամտությունները այնքան կոպիտ է եղել, որ խափանվել են բնության մեջ հազարամյակներ շարունակ ձևավորված կապերը: Մարդը սկսել է աստճանաբար կտրվել բնությունից:

Տարբերում են մարդկային գործունեության 4 տիպի հետևանքներ.

1. Երկրի մակերեսի կառուցվածքի փոփոխություն:
2. Կենսոլորտի բաղադրության փոփոխություն` նյութերի շրջապտույտի և նրա մեջ մտնող տարրերի հավասարակշռության խախտում:
3. Առանձին տարածաշրջանների և տարածքների էներգետիկ և ջերմային հավասարակշռության խախտում:
4. Բնական ապրելատեղերի փոփոխություն, հիմնականում ոչնչացում:

Բնության վրա մարդածին գործոնների ազդեցությունը կարող է լինել ինչպես գիտակցված, այնպես էլ պատահական կամ չգիտակցված:



8. Էկոլոգիայի մեթոդաբանությունը

Էկոլոգիայի՝ որպես գիտության նկատմամբ մեթոդաբանության մոտեցումը հնարավորություն է տալիս առանձնացնել հետազոտությունների առարկան, խնդիրները և մեթոդները: Էկոլոգիայի հետազոտության օգյեկտները, հիմնականում, անհատական օրգանիզմների բարձր մակարդակի համակարգեր են՝ պոպուլյացիաներ, էկոհամակարգեր, ինչպես նաև ամբողջ կենսոլորտը: Կիրառական էկոլոգիայի հիմնական խնդիրը բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման սկզբունքների մշակումն է՝ կյանքի կազմակերպման ընդհանուր ձևավորված օրինաչափությունների հիման վրա: Հետազոտության մեթոդները էկոլոգիայում բաժանվում են դաշտայինի, փորձարարականի և մոդելավորման մեթոդների: Դաշտային մեթոդները իրենցից ներկայացնում են օրգանիզմների գործառնության դիտարկումը նրանց բնակեցման բնական միջավայրում: Փորձարարական մեթոդները իրենց մեջ ներառում են տարատեսակ էկոլոգիական գործոնների փոփոխությունը, որոնք ազդում է օրգանիզմների վրա՝ մշակված ստացիոնար լաբորատոր պայմաններում: Մոդելավորման մեթոդները հնարավորություն են տալիս կանխատեսել կենդանի համակարգերի միջև և նրանց ու շրջակա միջավայրի միջև փոխներգործության տարբեր գործընթացների զարգացումը:



Եզրակացություն

Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում խիստ անհրաժեշտ համարեցի այն պատճառով ,որ երկրագնդի վրա ապրող յուրաքանչյուր անձ պետք է տիրապետի էկոլոգիական,տեղային և համամոլորակային խնդիրներին ,որի արդյունքում պահպանվում է մեր առողջությունը և երկարում է կյանքի տևողությունը:

Ինչպես նաև Հանրապետության ազգաբնակչության և առանձին հերթին սովորողների և ուսանողների շրջանում բնության մասին նոր մտածելակերպի ձևավորումը կնպաստի ոչ միայն չափավորելու բնության վրա մարդու ներգործությունը ,այլ նաև կանխելու բոլոր տեսակի այն միջամտությունները ,որոնք կարող են բացասաբար ազդել շրջակա միջավայրի վրա:

Գրականություն

1. «Էկոլոգիայի հիմունքներ» Լ. Մելքումյան, Երևան 2008թ.
2. «Միտք սերմանի՛ր, ծառ տնկի՛ր» Բնապահպանական կրթության ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2010 «Հայաստան ծառատունկ ծրագիր»
3. «Մարդու էկոլոգիա և էկոլոգիական ֆիզիոլոգիա» ԵՊՀ, Կ.Վ. Գրիգորյան, Օ.Ի Աղամյան
4. Одум Ю. Основы экологии – М, 1975
5. Будыко М. И. Глобальная экология М. 1972